ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

№ - 020/ 0569
10_ փետրվար 2026թ.

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
Կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

<<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ
Գործունեության հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ,ք. Իջևան,Նալբանդյան 1/1
Էլեկտրոնային հասցե՝ artarsllc@mail.ru
ՀՎՀՀ՝07621825

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին

Հարգելի պարոն Աթաբեկյան.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ Ապարանի համայնքապետարանի(այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կապալառու) միջև Ապարան համայնքի Ապարան քաղաքի բազմամուտք բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով 08.07.2024թ. կնքվել է N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 ծածկագրով պայմանագիրը՝ 191 412 696 /մեկ հարյուր իննսունմեկ միլիոն չորսը հարյուր տասներկու հազար վեցը հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ արժեքով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվել են սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝ համայնքի մասնաբաժին 50/հիսուն/ տոկոս, սուբվենցիոն մասնաբաժին 50/հիսուն/ տոկոս:

Կնքված պայմանագրի 8.15 կետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքման միջոցով: Համայնքային մասնաբաժնի ֆինանսական միջոցները (95 706 348/ իննսունհինգ միլիոն յոթ հարյուր վեց հազար երեք հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ) հատկացվել են և 21.08.2024թվականին կնքվել է Համաձայնագիր 1-ը , որով հատկացված ֆինանսական միջոցների չափով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 90/իննսուն/-րդ օրացուցային օրը:

27.12.2024թվականին ՀՀ Կառավարությունը ընդունել է «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին համայնքների հետ կնքված սուբվենցիայի տրամադրման մասին պայմանագրերում, ինչպես նաև համապատասխան շինարարական աշխատանքների կատարման գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին» 2085-Ա որոշումը և 2024 թվականին հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերի վերջնաժամկետ է սահմանել 15.11.2025թվականը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության վերոնշյալ որոշումը, հաշվի առնելով այն մտահոգությունը, որ մինչև 12.05.2025թվականը Կապալառուն թիվ 1 և թիվ 2 կատարողական ակտերով ներկայացրել է ընդհանուր 32 744 312/ երեսուներկու միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր տասներկու/ ՀՀ դրամի (առանց կիրառված գործակցի, կիրառված գործակցով՝ 25 870 148/ քսանհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար մեկ հարյուր քառասունութ/ ՀՀ դրամի) փաստացի կատարված աշխատանքներ (Ընդհանուր աշխատանքների՝ 13,5%/տոկոս/-ը) և սահմանված ժամկետում Կապալառուն ժամանակին չի կարող ավարտին հասցնել պայմանագրով նախատեսված աշխատանքները՝ 12.05.2025թվականին Ապարանի համայնքապետարանի գնումների մասնագետ Հայկ Հովսեփյանի Էլեկտրոնային հասցեից (<haykhovsepyanhv@mail.ru>) Կապալառուի (artarsllc@mail.ru) Էլեկտրոնային հասցեին ծանուցվել է Համաձայնագիր 2-ը, համաձայն որի հատկացվել են 100%/ մեկ հարյուր/ տոկոս ֆինանսական միջոցները (ներառյալ սուբվենցիոն մասնաբաժնի) և N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 պայմանագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.11.2025թվականը: Միաժամանակ համաձայնագրի ծանուցման կից գրությամբ Կապալառու կազմակերպությանը առաջարկվել է 15 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել համաձայնագիր 2-ը՝ կից ներկայացնելելով 121 147 311/ մեկ հարյուր քսանմեկ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար երեք հարյուր տասնմեկ / ՀՀ դրամի նկատմամբ 10%/տաս տոկոս/ պայմանագրի և 30% /երեսուն տոկոս/ որակավորման ապահովումները ՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ծանուցման մեջ նշվել է նաև, որ Համաձայնագիր N2-ի ապահովումների ժամկետները բանկային երաշխիքներով ներկայացվելու դեպքում սահմանել հետևյալ ժամկետներով՝

Պայմանագրի ապահովում՝ 15.11.2026թվականին հաջորդող 90-րդ աշխատանքային օրը:

Որակավորման ապահովում՝ 15.11.2025թվականին հաջորդող 90-րդ աշխատանքային օրը:

Միաժամանակ հաշվի առնելով,որ Կապալառուն դեռևս չի ավարտել Համաձայնագիր N1-ով սահմանված աշխատանքները՝ պահանջվել է նաև երկարաձգել Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից 14.08.2024թվականին տրված բանկային երաշխիքների՝ թիվ O.AB.100.12CIB.PIED.0.14881.24 (որակավորման ապահովում) և թիվ O.AB.100.12CIB.PIED.0.14880.24 (պայմանագրի ապահովում) ժամկետները, որակավորման ապահովման բանկային երաշխիքի ժամկետ սահմանելով մինչև 15.11.2025թվականին հաջորդող 90-րդ աշխատանքային օրը, իսկ պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի ժամկետ՝ 15.11.2026թվականին հաջորդող 90-րդ աշխատանքային օրը և թղթային տարբերակով ներկայացնել Ապարանի համայնքապետարան՝ ք.Ապարան Բաղրամյան 26 հասցե:

Սակայն 14.05.2025թ. Ապարանի համայնքապետարանի գնումների մասնագետ Հայկ Հովսեփյանի Էլեկտրոնային հասցեին(<haykhovsepyanhv@mail.ru>) ստացվել է Կապալառուի պատասխան գրությունը, որով Կապալառուն պահնջել է տեղեկատվություն տրամադրել Ապարանի համայնքապետարանի սուբվենցիոն ծրագրի հաշվեհամարին սուբվենցիոն մասնաբաժնի ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ:

Ի պատասխան Կապալառուի 14.05.2025թվականի գրության Ապարանի համայնքապետարանը 19.05.2025թ. թիվ N-020/ 1667 գրությամբ հայտնել է հետևյալը. **« Հարգելի պարոն Աթաբեկյան.**

Ի պատասխան Ձեր՝ Ապարանի համայնքապետարանի գնումների մասնագետ Հայկ Հովսեփյանի Էլեկտրոնային հասցեին(<haykhovsepyanhv@mail.ru>) 14. 05. 2025թվականին ուղղարկված գրության՝ հայտնում ենք, որ 12.05.2025թվականին (artarsllc@mail.ru) Էլեկտրոնային հասցեին ծանուցված Համաձայնագիր 2-ով ներկայացված ֆինանսական միջոցները հանդիսանում են սուբվենցիոն մասնաբաժնի ֆինանսական միջոցներ և հատկացվում են Ապարանի համայնքապետարանի համայնքային բյուջե՝ համաձայն <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին>>2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման Հավելված N2-ի 26-րդ կետի:

Համաձայնագիր 2-ով ներկայացված սուբվենցիոն մասնաբաժնի ֆինանսական միջոցներով առկայության համար համաձայնագիր կնքելու ծանուցման համար հիմք է հանդիսացել հետևյալ իրավական ակտերը և հանգամանքները.

1. Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 22.07.2024թվականի N 01/5/04507-2024 գրության ՀՀ կառավարությունը հաստատել է Ապարան համայնքի Ապարան քաղաքի բազմամուտք բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներըի ծրագիրը և պետական բյուջեում նախատեսել է համապատասխան ֆինանսական միջոցները (այսինքն սուբվենցիոն մասնաբաժնի ֆինանսական միջոցները փաստացի նախատեսված են):

Համաձայն՝ <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին>>2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման Հավելված N2-ի 26-րդ կետի՝ սուբվենցիոն մասնաբաժնի ֆինանսական միջոցները ուղղվում են համայնքային բյուջե՝ համայնքային մասնաբաժնով նախատեսված ֆինանսական միջոցներով աշխատանքները իրականացնելու և դրա վերաբերյալ կատարողական և վճարման ակտերը սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելուց հետո:

<<ԱՐՏԱՐՍ>>ՍՊԸ-ն դեռևս չի իրականացրել NՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 ծածկագրով պայմանագրով նախատեսված **աշխատանքների համայնքային մասնաբաժնի՝ 95 706 348/ իննսունհինգ միլիոն յոթ հարյուր վեց հազար երեք հարյուր քառասունութ/ ՀՀ դրամի աշխատանքները, և 03.02.2025թվականին ներկայացրել է 32 744 312/ երեսուներկու միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր տասներկու/ ՀՀ դրամի կատարողական ակտ/ Կատարողական ակտ-2/, ուստի Ապարանի համայնքապետարանը, համաձայն վերո նշված սուբվենցիայի տրամադրման կարգի Հավելված N2-ի 26-րդ կետի, չի կարողացել դիմել ՀՀ կառավարությանը սուբվենցիոն մասնաբաժնի գումարը հատկացնելու համար:**

Հետևաբար, երբ <<ԱՐՏԱՐՍ>>ՍՊԸ-ն կատարի համայնքային մասնաբաժնով նախատեսված ֆինանսական միջոցներով նախատեսված աշխատանքները և սահմանված կարգով ներկայացնի կատարողական ակտերը՝ համայնքապետարանը կդիմի ՀՀ կառավարությանը, և կառավարության կողմից արդեն իսկ հաստատված սուբվենցիոն մասնաբաժնի ֆինանսական միջոցները կուղղվեն համայնքի բյուջե:

Ելնելով վերոգրյալից սուբվենցիոն մասնաբաժնի ֆինանսական միջոցների Ապարանի համայնքային բյուջե ուղղված չլինելու հանգամանքը՝ հիմք չէ 12.05.2025թվականին (artarsllc@mail.ru) Էլեկտրոնային հասցեին ծանուցված Համաձայնագիր 2-ը չկնքելու և Համաձայնագիր 2-ով հաստատված ֆինանսական միջոցների պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

2. Համաձայն՝ ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին համայնքների հետ կնքված սուբվենցիայի տրամադրման մասին պայմանագրերում, ինչպես նաև համապատասխան շինարարական աշխատանքների կատարման գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին>> 27.12.2024թ 2085-Ա որոշման՝ Ապարան համայնքի Ապարան քաղաքի բազմամուտք բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.11.2025թվականը:

Համաձայնագիր 2-ը 12.05.2025թվականին չծանուցելու դեպքում <<ԱՐՏԱՐՍ>>ՍՊԸ-ն չէր կարող ՀՀ կառավարության **որոշմամբ սահմանված ժամկետում ավարտին հասցնել աշխատանքները՝ հաշվի առնելով,որ ըստ Ապարանի համայնքապետարանի և <<ԱՐՏԱՐՍ>>ՍՊԸ-ի միջև 08.07.2024թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 ծածկագրով պայմանագրի, աշխատանքների ամբողջական իրականացման համար նախատեսված է 180/մեկ հարյուր ութանասուն/ օրացույցային օր ժամկետ:**

Կից ներկայացնում ենք՝ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 22.07.2024թվականի N 01/5/04507-2024 գրությունը, <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին>>2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշումը, ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին համայնքների հետ կնքված սուբվենցիայի տրամադրման մասին պայմանագրերում, ինչպես նաև համապատասխան շինարարական աշխատանքների կատարման գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին>> 27.12.2024թ 2085-Ա որոշումը:

Առդիր մեկ զիպ ֆայլ»:

Ի պատասխան 19.05.2025թ. թիվ N-020/ 1667 գրության՝ Կապալառուն 20.05.2025թվականի թիվ ԱԱ-25/05-20.1 գրությամբ հայտնել է, որ քանի որ համայնքային մասնաբաժնի մասով աշխատանքները դեռ ավարտված չեն, նպատակահարմար չի գտնում

կնքել նոր համաձայնագիր և տրամադրել երաշխիքները: Միաժամանակ նշել է, որ Թիվ 1 և Թիվ 2 կատարողական ակտերի վճարումները կատարվել են երկու ամիս ուշացումով:

Հիմք ընդունելով 27.12.2024թվականի ՀՀ Կառավարությաւն 2085-Ա որոշումը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով «Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների և ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի N Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի 20.03.18թ. թիվ Պ-3 պաշտոնական պարզաբանման 1-ին կետի 1-ին ենթակետի Բ) պարբերության կարգավորմամբ, հաշվի առնելով, որ աշխատանքները իրականացվում են սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Կապալառուի հավաստիացումները, որ աշխատանքները ավարտելու է սահմանված ժամկետում և ներկայացնելու է Համաձայնագիր 2-ը և Համաձայնագիր 2-ով հաստատված ֆինանսական միջոցների պայմանագրի և որակավորման ապահովումները՝ պատասխանատու ստորաբաժանումը նպատակահարմար չի գտել տվյալ փուլում պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթաց նախաձեռնել:

Սակայն տեսնելով, որ Կապալառուն աշխատանքները դանդաղ է կատարում, Ապարանի համայնքապետարանը 13.08.2025թվականի՝ N-020/2568, 22.09. 2025թվականի՝ N-020/2965, 06.11. 2025թվականի՝ N-020/3378 գրություններով առաջարկել է Կապալառուին աշխատանքները սահմանված ժամկետում ավարտին հասցնելու համար ավելացնել աշխատակիցների քանակը և միաժամանակ պահանջել է վերացնել աշխատանքներում արձանագրված երաշխիքային ժամկետի մեջ գտնվող որակական թերությունները: Կապալառուն չի ավելացրել աշխատակիցների քանակը, իսկ թերությունները վերացրել է մասամբ:

26.11.2025թվականին Ապարանի համայնքապետարանի՝ N-020/3726 գրությամբ կրկին Կապալառուին տեղեկացրել է արձանագրված որակական թերությունների և պայմանագրով նախատեսված չկատարված աշխատանքները ժամկետի ուշացումով կատարվող աշխատանքներ դիտարկելու վերաբերյալ, սակայն Կապալառուն ոչ միայն չի շարունակել աշխատանքները, այլև հետագայում ամբողջությամբ դադարեցրել է:

Կապալառուն մինչ օրս՝ 09.02.2026թվաականը, ներկայացրել է հետևյալ կատարողական ակտերը՝

24.10.2024թվականին Թիվ 1 կատարողական ակտ՝ 15 886 064/ տասնհինգ միլիոն ութ հարյուր ութանասունվեց հազար ութ հարյուր ութանասունչորս/ ՀՀ դրամի չափով:

03.02. 2025 թվականին Թիվ 2 կատարողական ակտ ՝ 9 984 084/ ինը միլիոն ինը հարյուր ութանասունչորս հազար ութանասունչորս/ՀՀ դրամի չափով:

14.08.2025թվականին Թիվ 3 կատարողական ակտ՝ 11 517 315/ տասնմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամի չափով:

27.10.2025թվականին Թիվ 4 կատարողական ակտ՝ 9 257 197/ինը միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար մեկ հարյուր իննսունյոթ/ ՀՀ դրամի դրամի չափով:

Թիվ 1, Թիվ 2 և Թիվ 3 կատարողական ակտերի վճարումները ամբողջությամբ կատարվել են, Թիվ 4 կատարողական ակտից վճարվել է 2 000 000/երկու միլիոն/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից պատասխանատու ստորաբաժանումը 09.02.2026թվաականի զեկուցագրով Պատվիրատուի ղեկավարին առաջարկել է , հիմք ընդունելով N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 պայմանագրի 3.1.4 կետի ա) պարբերության և 8.15 կետի պահանջները, չկատարված 144 768 036 / մեկ հարյուր քառասուն չորս միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար երեսունվեց/ ՀՀ դրամի մասով միակողմանիորեն լուծել Ապարանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ –ի (այսուհետ՝ Կապալառու) միջև Ապարան համայնքի Ապարան քաղաքի բազմամուտք բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով 08.07.2024թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 ծածկագրով պայմանագիրը և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա) պարբերությամբ Կապալառուին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսել:

Միաժամանակ առաջարկել է հաշվի առնելով, որ Կապալառուն ամբողջությամբ չի կատարել Համաձայնագիր 1-ով նախատեսված աշխատանքները, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի վերջին պարբերության և նույն կետի 27-րդ ենթակետի Կապալառուից գանձել 14.08.2024թվականին Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից որպես Համաձայնագիր 1-ով նախատեսված աշխատանքների կատարման ապահովումներ ներկայացված բանկային երաշխիքներից՝ 18 644 571 /տասնութ միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ (Համաձայնագիր 1-ով նախատեսված կատարման ենթակա չկատարված աշխատանքների որակավորման ապահովման երաշխիքից բռնագանձվող գումար (հաշվարկի բանաձևը տեքստի վերջում)) և 12,114,731/ տասներկու միլիոն մեկ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր երեսուներկու/ՀՀ դրամ (պայմանագրի ապահովման) գումարները, ինչպես նաև վճարման ենթակա գումարից հաշվանցել և կիրառել N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 պայմանագրի 6.3 կետով նախատեսված 957 063 /ինը հարյուր հիսունյոթ հազար վաթսուներեք/ ՀՀ դրամի չափով տուգանք:

Հաշվի առնելով, որ 14.08.2024թվականին Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից տրված թիվ .AB.100.12CIB.PIED.0.14881.24 որակավորման ապահովման ժամկետը լրացել է 2025թվականի հունիսի 23-ին և Կապալառուն 14.05.2025թվականի գրության համաձայն չի երկարաձգել նշված երաշխիքի ժամկետը՝ Թիվ 4 կատարողական ակտի չվճարված 7 257 197/յոթ միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար մեկ հարյուր իննսունյոթ/ ՀՀ դրամ գումարը վճարել միայն 18 644 571/տասնութ միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամը բռնագանձելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուի ղեկավարը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման 09.02.2026թվաականի զեկուցագիրը, N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 պայմանագրի 3.1.4 կետի ա) պարբերության և 8.15 կետի պահանջները՝ 10.02.2026թվականի N49-Ա որոշմամբ չկատարված 144 768 036 / մեկ հարյուր քառասուն չորս միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար երեսունվեց/ ՀՀ դրամի մասով միակողմանիորեն լուծում է Ապարանի համայնքապետարանի (Պատվիրատու) և <<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ –ի (Կապալառու) միջև Ապարան համայնքի Ապարան քաղաքի բազմամուտք բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով 08.07.2024թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ համաձայն ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-53/24 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի Պատվիրատուն առաջարկում է Կապալառուին Պատվիրատուի կողմից www.procurement.am պաշտոնական տեղեկագրում

պայմանագիրը միակողմանիորեն լուծելու ծանուցումը հրապարկվելու օրվանից հաշված տասներորդ օրը համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի վերջին պարբերության և նույն կետի 27-րդ ենթակետի պահանջների վճարել պայմանագրի չկատարված մասի միակողմանի տուժանքի ձևով ներկայացված ապահովումները՝ (որակավորման ապահովում՝ 36,344,193/երեսունվեց միլիոն երեք հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ, պայմանագրի ապահովում՝ 12,114,731/ տասներկու միլիոն մեկ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր երեսունմեկ/ՀՀ դրամ), Ապարանի համայնքապետարանի 900455101353 հաշվեհամարին (տուժանքներում նշված 900452000079 հաշվեհամարը փոխվել է), գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառվելու համար:

Քայլ 1. 46644660/95706348*100=48,7%,

(որտեղ՝ **46 644 660 ՀՀ դրամը՝** ներկայացված ընդհանուր կատարողական ակտերի հանրագումարն է,

95 706 348 ՀՀ դրամը՝ Համաձայնագիր 1-ով նախատեսված կատարման ենթակա աշխատանքների գումարն է)

Քայլ 2. 36344194*48,7%= 17699622 ՀՀ դրամ

(որտեղ՝ **36 344 194 ՀՀ դրամը՝** 14.08.2024թվականին Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից տրված որակավորման ապահովման բանկային երաշխիքի գումարն է,

48,7%-ը՝ կատարված աշխատանքների և Համաձայնագիր 1-ով նախատեսված կատարման ենթակա աշխատանքների տոկոսային հարաբերակցությունն է)

17 699 622 ՀՀ դրամը՝ 14.08.2024թվականին Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից տրված որակավորման ապահովման բանկային երաշխիքից պակասեցվող գումարն է)

Քայլ 3. 36344194-17699622= 18644571 ՀՀ դրամ՝ 14.08.2024թվականին Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից տրված որակավորման ապահովման բանկային երաշխիքից բռնագանձման ենթակա գումար:

Կից ներկայացնում ենք ընթացակարգի փաթեթը, սույն գրության մեջ նշված իրավական ակտերը, գրությունները, գնման ընթացակարգի հրավերը, տուժանքի և բանկային երաշխիքի ձևով ներկայացված ապահովումները և այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր 1 զիպ ֆայլ:

Վերո նշված փաստաթղթերի պատճենները պայմանագրի միակողմանի լուծման հաջորդող աշխատանքային օրը ուղղարկվում են Կապալառուին նաև փոստային առաքմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ Ապարանի համայնքապետարանի
գնումների գլխավոր մասնագետ
Հայկ Հովսեփյան Հեռ.՝ +374 94-23-18-93